ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մարտի 27-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվի դարակաշարերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխությունների պատճառը և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխությունների առաջացման պատճառ՝ Անհրաժեշտություն է առաջացել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում կատարելու փոփոխություններ՝ հաշվի առնելով ընթացակարգի հրավերի պարզաբանման վերաբերյալ 27.03.2025թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով ստացված հարցումը, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Փոփոխությունների նկարագրություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում «Դարակաշարերը պետք է պատրաստված լինեն երկաթյա կոնստրուկցիաներով, դարակները համապատասխան խտացրած 18 մմ հաստությամբ լամինացված փայտանյութից /ԴՍՊ/:» նախադասությունը փոխարինվել է «Դարակաշարերը պետք է պատրաստված լինեն երկաթյա կոնստրուկցիաներով՝ մոխրագույն, փոշեներկված, դարակները՝ համապատասխան խտացրած 18 մմ հաստությամբ մոխրագույն լամինացված փայտանյութից /ԴՍՊ/:» նախադասությունը և «Դարակաշարի նմուշը նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ:» նախատասությունը փոխարինվել է «Դարակաշարի նմուշը (գունային գամման և արտաքին տեսքը) նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ:» նախադասությունը:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի փոփոխված հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա ժամը 10:00-ն:

Փոփոխություններ հիմնավորում՝ Փոփոխությունները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: